



Primacy of the Armenian Apostolic Orthodox Church

of the United Kingdom and Republic of Ireland

His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish

Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծովի

Cranley Gardens, Kensington London, SW7 3BB

t. +44 (0)20 7373 8133 Pastoral office email: info@styeghiche.org.uk

www.styeghiche.org.uk <https://www.facebook.com/StYeghiche>

SUNDAY BULLETIN

1: List of the Sunday Reading,

9th July 2017

Bulletin No 29/17

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ՀՌՈՍԷԱՑԻՆԵՐԻՆԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 9:30-10:4

Ուրեմն ի՞նչ ըսենք: Հետեւեա՛լ լը, թէ հեթանոսները՝ որոնք հետամուտ չէին արդարութեան՝ հասան արդարութեան, ա՛յն արդարութեան՝ որ հաւատքէն է. իսկ Իսրայէլ՝ որ հետամուտ էր արդարութեան՝ Օրէնքին՝ չհասաւ արդարութեան Օրէնքին: Ինչո՞ւ. որովհետեւ ուզեց արդարանալ ո՛չ թէ հաւատքով, հապա որպէս թէ Օրէնքին գործերով: Արդարեւ անոնք զայթեցան սայթաքումի քարին վրայ,

ինչպէս գրուած է. «Ահա՛ Սիոնի մէջ կը դնեմ սայթաքումի քար մը ու զայթակողութեան ժայռ մը, եւ ո՛վ որ հաւատայ անոր՝ ամօթահար պիտի չըլլայ»:

Եղբայրնէ՛ր, սիրտիս բաղձանքն է, նաեւ Աստուծոյ ուղղած աղերսանքս՝ Իսրայէլի համար, որ անոնք փրկուին: Որովհետեւ ես անոնց համար կը վկայեմ թէ նախանձախնդրութիւն ունին Աստուծոյ հանդէպ, բայց ո՛չ թէ գիտակցութեամբ: Քանի որ՝ անգիտանալով Աստուծոյ արդարութիւնը եւ ջանալով հաստատել իրե՛նց արդարութիւնը՝ անոնք չհպատակեցան Աստուծոյ արդարութեան: Որովհետեւ Քրիստո՛ս է Օրէնքին վախճանը՝ ամէն հաւատացեալի արդարութեան համար:

The Epistle of St Paul to the Romans 9:30-10:4

What shall we say then? That Gentiles, who did not pursue righteousness, attained righteousness, even the righteousness which is by faith; but Israel, pursuing a law of righteousness, did not arrive at that law. Why? Because *they did not pursue it by faith, but as though it were by works. They stumbled over the stumbling stone, just as it is written, “BEHOLD, I LAY IN ZION A STONE OF STUMBLING AND A ROCK OF OFFENSE, AND HE WHO BELIEVES IN HIM WILL NOT BE DISAPPOINTED.”*

Brethren, my heart’s desire and my prayer to God for them is for *their* salvation. *For I testify about them that they have a zeal for God, but not in accordance with knowledge.* For not knowing about God’s righteousness and seeking to establish their own, they did not subject themselves to the righteousness of God. For Christ is the end of the law for righteousness to everyone who believes.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ 13:24-30

Ուրիշ առակ մըն ալ առաջարկեց անոնց ու ըսաւ. «Երկինքի թագաւորութիւնը նմանեցաւ մարդու մը, որ իր արտին մէջ լաւ սերմ ցանեց: Մինչ մարդիկ կը քնանային՝ իր թշնամին եկաւ, որոմ ցանեց ցորենին մէջ եւ գնաց: Երբ խոտը ծաղկեցաւ ու պտուղ բերաւ, այն ատեն որոմն ալ երեւցաւ: Ուստի հողատիրոջ ծառաները մօտեցան եւ ըսին անոր. “Տէ՛ր, դուն լաւ սերմ չցանեցի՞ր արտիդ մէջ. ուրեմն որոմը ուրկէ՞ է”: Ան ալ ըսաւ անոնց. “Թշնամի մը ըրած է ասիկա”: Ծառաները ըսին իրեն. “Ուստի կուզե՞ս որ երթանք ու քաղենք զանոնք”: Իսկ ան ըսաւ. “Ո՛չ, որպէսզի երբ որոմը քաղէք՝ ցորենն ալ չփրցնէք անոր հետ: Թո՛ղ տուէք որ երկուքն ալ միասին աճին՝ մինչեւ հունձքի ատենը”: Եւ հունձքի ատենը պիտի ըսեմ հնձողներուն. “Նախ որո՞մը քաղեցէք ու խորձ-խորձ կապեցէ՛ք՝ այրելու համար, իսկ ցորենը ժողվեցէ՛ք իմ ամբարս»:

2: A short interpretation of the Gospel reading under the title The hard sayings'

The Holy Gospel of Jesus Christ according to Matthew 13:24-30

Jesus presented another parable to them, saying, "The kingdom of heaven may be compared to a man who sowed good seed in his field. "But while his men were sleeping, his enemy came and sowed tares among the wheat, and went away. "But when the wheat sprouted and bore grain, then the tares became evident also. "The slaves of the landowner came and said to him, 'Sir, did you not sow good seed in your field? How then does it have tares?' "And he said to them, 'An enemy has done this!' The slaves said to him, 'Do you want us, then, to go and gather them up?' **"But he said, 'No; for while you are gathering up the tares, you may uproot the wheat with them. 'Allow both to grow together until the harvest; and in the time of the harvest I will say to the reapers, "First gather up the tares and bind them in bundles to burn them up; but gather the wheat into my barn.'"**

Տոն Սբ. Աստվածածնի տուփի գյուտի

Ավանդության համաձայն՝ Սբ. Աստվածածնի տուփը, որտեղ պահվել է Տիրամոր գլխանոցը, հայտնաբերել են երկու հույն իշխաններ, որոնք Երուսաղեմ ուխտի գնալիս Գալիլիայում մի հրեա կնոջ մոտ տեսնում են տուփը, որի գործությամբ հիվանդներ էին բժշկվում: Տուփը փոխելով իր կրկնօրինակով, երիտասարդներն այն բերում են Կ. Պոլիս և հանձնում պատրիարքին: Պատրիարքը տուփը զետեղում է Սբ. Աստվածածին եկեղեցում եւ հաստատում Սբ. Աստվածածնի տուփի գյուտի տոնը:

Այս տոնը Հայ Առաքելական եկեղեցին սկսել է տոնել 18-րդ դարից՝ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի կարգադրությամբ:

Feast of the Discovery of St. Mary's Box

According to tradition, while en route to Jerusalem on a pilgrimage, two Greek princes come across a chest that once belonged to St. Mary. In Galilee, they see a large crowd gathered in front of a Jewish woman's house. They inquire and find that the sick are being healed due to the inexplicable power of the chest. The princes bring the box to Constantinople and present it to the Patriarch, who places it in the Church of St. Mary. The Patriarch then establishes the Feast of the Discovery of St. Mary's Box.

The Armenian Church celebrates this feast upon the order of the Catholicos Simeon from Yerevan, who accepted this tradition from the Greek Orthodox Church in the late 18th century.

Քրիստոս ճանաչում է մեզ, իսկ մենք...

«Նա իր ոչխարներին անուններով է կանչում եւ նրանց դուրս է հանում»: Հովհ. 10:3:

Քրիստոս մեզ մեր անուններով է կանչում որովհետեւ անձնապես ճանչնաչում է մեզ: Անունը իմանալը պատկերացումն է այն սերտ մտերմության, որ գոյություն ունի Աստծո եւ իր զավակների միջեւ:

Երբ Քրիստոս հայտարարում է, որ մեզ մերանուններով է ճանչում, խորքի մեջ ցանկանում է ցույց տալ մեզ, եւ մանավանդ վստահություն ներշնչել, որ մենք ի՛րենն ենք, իր բարեկամներն ենք, իր սեփականությունն ենք, իր պաշտպանության առարկաներն ենք:

Այսօր աշխարհում յուրաքանչյուր մարդ իր անձնագիրն ունի, որի միջոցով ճանաչվում իր երկրի կառավարության կողմից: Քրիստոսի համար սակայն, մենք թիվ ու թվանշան կամ փաստաթուղթ չենք: Քրիստոսի համար մենք անուն ունեցող ա՛նձ ենք, ապրող եւ իրական անձ, սիրելի ու կարեւոր անձ: Քրիստոսի համար մենք իր Արյան գինն ենք, եւ ուստի՝ երկինքից ավելի՛ կարեւոր, հրեշտակներից ավելի՛ թանկարժեք:



3: List of the Feasts celebrated in the Armenian church

Աստծո խոսքը ուղղված Եսայի մարգարեին, ուղղված է նաև մեզանից յուրաքանչյուրին.

«Մի՛ վախցիր, քանզի ես քեզ փրկեցի, քեզ քո անունով կանչեցի. դու իմս ես» (Ես 43: 1): Մեկ անգամ, որ Աստված փրկեց մեզ, մենք դարձանք իր բաժինն ու ժառանգությունը: Աստված չի կարող «դու իմս ես» ասել ոեւէ մարդու որ Քրիստոսով հաշտված չէ իր հետ: Մեղքը մեզ օտարական դարձրեց մեր Երկնավոր Հորից: Քրիստոս եկավ եւ վերստին ընդունեց մեզ: Մենք այլևս օտար չենք իրեն համար: Աստծո եւ մեր միջև կա՛ անկեղծություն, կա՛ հարազատություն, կա՛ ջերմ սեր, կա՛ խոր կապվածություն, կա՛ միասին ժամանակ անցնելու գորավոր փափագ, կա՛ իրար նայելու եւ իրարով կշտանալու անգուպելի ցանկություն: Նա մեզ ընդնել է իր սրտի մեջ, իր սիրո մեջ, իր ծրագրի մեջ, իր արքայության մեջ: Մենք խորթ չենք իր համար: Մենք ծանոթ ենք իրեն: Մենք արժեք ենք իր համար: Մենք իր ուրախության եւ ցնծութեան առարկաներն ենք: Մենք իր հպարտության ու պարծանքի անօթներն ենք:

Ենք այս բոլորը եղանք Քրիստոսով եւ Քրիստոսի համար, որովհետեւ ընդունեցինք մեր օտարական լինելը եւ դիմեցինք Քրիստոսին՝ մեր գթառատ Հովվին, մեր հոգիների Տեսուչին, եւ Նրանից խնդրեցինք ապաստան եւ պաշտպանություն, փրկություն եւ հաշտություն:

Միբե՛լի՛ եղբայր եւ քույր, եթե իմանաս թե Հիսուս որքա՛ն է սիրում քեզ եւ ցանկանում փրկել, հավատում եմ, որ վայրկեան իսկ պիտի չէիր ցանկանա իրենից հեռու մնալ, եւ ո՛չ միայն այսքան, այլև խորապես պիտի ցավ ապրեիր այն բոլոր տարիների համար որ ապրել ես առանց իրեն: Առանց Քրիստոսի ապրված օրը՝ մեռած օր է: Դու քեզ թույլ մի՛ տուր մեկ օր իսկ ապրելու առանց իրեն: Հիմա՛ է փրկությանդ օրը (Բ Կորնթ. 6; 2): Հիմա՛ մոտեցիր նրան, եւ առիթ տուր Նրան քեզ քո անունով կանչելու:

«Մյունյաց կանթեղ» Մյունյաց Թեմի պաշտոնաթերթ N33

Պատիվ ու հարգանք ձեռք են բերում ոչ թե ուժով, այլ մեծահոգությամբ

Արծվի ձագը գլուխը բնից հանելով, տեսավ ժայռերի մեջ ճախրող թռչունների բազմությունը:

– Մայրի՛կ, այս ի՞նչ թռչուններ են, – հարցրեց նա, – Մեր ընկերներն են, – ասաց մայր արծիվը որդուն, – արծիվն ապրում է մենության մեջ. այդպիսին է նրա կյանքը, սակայն ժամանակ առ ժամանակ նա ևս շրջապատի կարիք է զգում, այլապես նա էլ ի՞նչ թռչունների թագավոր: Բոլորին, ում դու տեսնում ես ներքևում, մեր հավատարիմ ընկերներն են:

Մոր բացատրությունից բավարարված՝ արծվի ձագը հետաքրքրությամբ շարունակեց հետևել թռչուններին՝ այսուհետև համարելով նրանց իր հավատարիմ ընկերները: Բայց հանկարծ նա գոռաց.

– Վա՛յ, վա՛յ, նրանք գողացան մեր սնունդը:

– Հանգստացի՛ր, որդիս: Նրանք մեզնից ոչինչ չեն գողացել, ես ինքս եմ նրանց հյուրասիրել: Ընդմիջտ հիշի՛ր, թե քեզ հիմա ինչ կասեմ, ինչքան էլ արծիվը սոված լինի, նա անպայման պետք է իր որսը կիսի հարևան թռչունների հետ: Այս բարձրությունից նրանք ի գորու չեն գտնելու սնունդ, և անհրաժեշտ է իրենց օգնել:

Յուրաքանչյուրը, ով ցանկանում է ունենալ հավատարիմ ընկերներ, պետք է լինի բարի և համբերատար՝ ուշադիր լինելով ուրիշների կարիքներին: Պատիվ ու հարգանք ձեռք են բերում ոչ թե ուժով, այլ մեծահոգությամբ և կարիքավորների հետ անգամ վերջին կտորը կիսելու պատրաստակամությամբ: **Գրառում՝ Սմբատ սարկավագ Խանվելյան**



4: Հոգեհանգիստ - Memorial Service

A memorial service at St Yeghiche Armenian Church is requested:

By Mrs Alice & Mr Aram Martirosian and Mr & Mrs Armand, Aline & Miss Tamar Abramian for the soul of their Father and Grandfather the late **VAHAN ABRAMIAN**, on the 1st anniversary memorial of his passing, also for all the old and new deceased members of the **MARTIROSSIAN** and **ABRAMIAN** Families.

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Welcome:

We wish to welcome those who are visiting our church.

The Parish Council would like to invite you to make St. Yeghiche Armenian Church your spiritual home. You are cordially invited to take part in the Service and activities of our Church.

Please approach to a member of the Parish Council and introduce yourself.

Appeal,

St Yeghiche Armenian Church Parish Council would like to purchase new vestments for the Clergy and Deacons, for which we need to raise £ 1500.00 towards the cost.

We appeal to all our Parishioners and Community members for help with this worthwhile project.

Your Generous contribution is highly appreciated. Thanking you in advance

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or **020 7373 8133** or by emailing info@styeghiche.org.uk Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)

For Requiem Service (Hokehankisd), please call the church office at **020 7373 8133**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated.

Please remember our Church in your prayers.

ANNOUNCEMENT:

Your kind donations are gratefully accepted:

In order to meet the ever increasing church functioning expenses, The St Yeghiche Parish Council would like to appeal to all members of the community for their annual membership dues and generous donations. Please complete this form and hand your donation to the members of the Parish Council at the side entrance of the Church. Alternatively please post your cheque to: St Yeghiche Armenian Church Parish c/o Dr. Setrag Karanfilian, 13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB. Please make your cheques payable to: "St Yeghiche Armenian Church".

Alternatively you can arrange a standing order or donation by bank transfer to our St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at:

HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB73MIL40022642674432, BIC: MIDLGB2106F

I wish to arrange a standing order/make a donation £to the St Yeghiche Arm. Church Parish.

Name:

Address:

Tel:.....Email:.....